

**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 231-Ա**

**3 օգոստոսի, 2020 թվական**

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հուլիսի 31-ին և օգոստոսի 2-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Արմեն Հակոբյան», Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հանրապետության 1/46/48 (ՀՎՀՀ 43053308).
- 2) Ա/Ձ «Իրինա Թովմասյան», Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Երևանյան Բենզալ կայան (ՀՎՀՀ 83644361).
- 3) Ա/Ձ «Վազգեն Մուսայելյան», Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան 23 (ՀՎՀՀ 43028647).
- 4) Ա/Ձ «Արծրուն Սողոմոնյան», Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 82, 82 (ՀՎՀՀ 66006527).
- 5) Ա/Ձ «Իշխան Փահլևանյան», Լոռու մարզ, ք. Սպիտակ, Երևանյան խճուղի (ՀՎՀՀ 66959786).
- 6) Ա/Ձ «Արմեն Հակոբյան», Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 3, 1 (ՀՎՀՀ 66925142):

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողների գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 03/08/20 16:12:07 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**